Ինչի՞ մասին են լռում լրատուության միութենական միջոցները

Ասենք՝ անիրազեկ են, ճիշտ չի լինի։ Բայց տեղեակ լինելով հանդերձ, նորից ու նորից ակընայայտ իրողութիւնները չարամտորէն, դեռ աւելին, թշնամաբար լռութեան են մատնում զանգուածային լրատուության միութենական միջոցները։ Էհ, քարը գլուխը։ Նրանց՝ կրեմլեան այդ կամակատարների ամենօրեայ բարբաջանքին չէ, որ ունկնդիր է բովանդակ աշխարհը։ Միջազգային հանրութիւնը քաջատեղեակ է հայ ժողովրդի մերօրեայ մահառումներին։ Եւ դա, նաեւ, ի շնորհիւ այնպիսի մի հզօր ու ճշմարտացի լրատուական միջոցի, ինչպիսին է «Ազատութիւն» ռադիոկայանը։

Եւ ահա անցած գիշեր ռադիոկայանի ռուսական ծառայութիւնը իր ունկնդիրներին կրկին ներկայացրեց Գետաշէնում տիրող իրավիճակը։ Տեղեկացնելով, որ երէկ Ադրբեջանի տարածքից ավտոբուսներով Տաուշի եւ Իջեւանի շրջաններ են բերուել ու սահմանազլխին գետնին են թափուել բազմաթիւ գետաշէնցիների խոշտանգուած մարմիններ, ռադիոկայանի թղթակից Դմիտրի Վոլչակը նշում է. «Զնայած պայմանաւորուածութիւն կար, որ գետաշէնցիներին եւ մարտունաշէնցիներին պէտք է տեղափոխեն Հայաստան, այնուամենայնիւ, կանանց, երեխաներին ու ծերունիներին փոխադրեցին Ստեփանակերտ, անշուշտ դրանով իսկ արցախցիներին ահաբեկելու նպատակով։ Իսկ գետաշէնցի տղամարդկանց տանջահար տեսքով հաւանաբար մտադիր են սարսափ ներարկել հայաստանցիներին։

Վոլչակը նաեւ հաղորդում է, որ, ըստ իր ստացած լուրերի, մահառող Գետաշէնում էին գտնուում Եւրոխորհրդարանի մէկ անդամ եւ ամերիկեան երկու լրագրող, ինչպէս նաեւ «Նորութիւններ» լրատուական գործակալութեան յատուկ թղթակից Վարդան Յովհաննիսեանը։ Նրանց ճակատագիրն անյայտ է, նշում է ռադիոկայանը։ Յայտնի է միայն, որ Վարդան Յովհաննիսեանը ձերբակալուել է, բայց թէ ուր են տարել նրան, չի ասում։ Ինչ վերաբերում է ամերիկեան լրագրողներին, ապա նրանք ներկայացել են որպէս «Նիւ Եորք թայմս» թերթի թղթակիցներ եւ խնդրել են իրենց մասին տեղեակ պահել Մոսկուայում Ամերիկայի Միացեալ Նահանգների դեսպանատանը եւ «Նիւ Եորք թայմս»ի մոսկովեան գրասենեակին։ Ըստ Դմիտրի Վոլչակի, նրանցից մէկի ազգանունը Բէյքեր է, բայց ինչպէս յայտնել են թերթի գրասենեակից, խմբագրութիւնը չի հաւաստում թղթակցի ազգանուան ճշտութիւնը։

Եւ այսպէս, հայ ժողովրդի նկատմամբ կրեմլեան հերթական ոճիրը, այս անգամ Հիւսիսային Արցախի երկու գիւղերում Գետաշէնում եւ Մարտունաշէնում, յուրախութիւն ադրբեջանական իշխանութիւնների, իրականացուել է իսկական բոլշեւիկ լենինեանների յատուկ սառնասրտութեամբ ու դաժանութեամբ։ Այսօր Կրեմլը տօնական զուգսերի մէջ է։ Երկրորդ համաշխարհային պատերազմում Գերմանիայի դէմ, նաեւ հայ ժողովրդի բազում զաւակների արեան գնով տարած յաղթանակի օ՞րն է միայն նշում։ Ոչ, իհարկէ։ Նաեւ «անյաղթ ու հզօր» կարմիր բանակի անանխադէպ յաղթանակը Գետաշէն եւ Մարտունաշէն գիւղերի մի բուռ խաղաղ բնակիչների նկատմամբ։ Այս ամենի մասին եւս, ինչ խօսք, խոր լռութիւն են պահպանում կենտրոնական լրատուության միջոցները։